

4. Ա Ր Տ Ա Ք Ի Ն Հ Ա Տ Վ Ա Ծ

**4.1. Վճարային հաշվեկշիռը
2015 թվականի հունվար-մարտին**

Վճարային հաշվեկշռի միասնականացված հոդվածների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հանրապետության արտաքին գործառնությունները 2015 թվականի հունվար-մարտին հիմնականում կապված են եղել արտաքին առևտրի հետ: Կապիտալի ներհոսքը գլխավորապես կատարվել է պաշտոնական գրանտների, միջպետական վարկի միջոցով և միջազգային կազմակերպություններից ստացված ֆինանսական օգնության հաշվին*: Ըստ նախնական տվյալների, 2015 թվականի հունվար-մարտին ԼՂՀ վճարային հաշվեկշռի ընթացիկ հաշվի պակասուրդը կազմել է 10057.9 մլն դրամ:

Ապրանքների գծով պակասուրդը 2015 թվականի հունվար-մարտին կազմել է 19603.3 մլն դրամ և 2014թ. հունվար-մարտի նկատմամբ աճել է 2.8 տոկոսով:

Ծառայությունների բնագավառում, ստացված տվյալների ամփոփման արդյունքներով, 2015 թվականի հունվար-մարտին հաշվեկշռի պակասուրդը կազմել է 1449.6 մլն դրամ և 2014թ. հունվար-մարտի նկատմամբ աճել է 43.6 տոկոսով:

Ընդհանուր առմամբ, 2015 թվականի հունվար-մարտին ապրանքների և ծառայությունների գծով պակասուրդը կազմել է 21052.9 մլն դրամ (2014թ. հունվար-մարտի 4.9 տոկոսը), եկամուտների գծով հաշվեկշռի պակասուրդը՝ 1236.3 մլն դրամ (73.7 տոկոսը), իսկ ընթացիկ տրանսֆերտների (նվիրատվությունների) սալդոն՝ 9758.7 մլն դրամ (12.2 տոկոսը):

Կապիտալի հաշվի հոդվածների սալդոն կազմել է 749.4 մլն դրամ:

2015 թվականի հունվար-մարտին ԼՂՀ վճարային հաշվեկշռի ֆինանսական հոդվածները ունեցել են հետևյալ պատկերը՝

- ուղղակի ներդրումները տնտեսության մեջ՝ 142.6 մլն դրամ,
- պորտֆելային ներդրումների պասիվային մասը՝ 421.5 մլն դրամ,
- այլ ներդրումների ակտիվային մասը՝ -25561.6 մլն դրամ,
- այլ ներդրումներից պարտավորությունները՝ 32524.4 մլն դրամ:

Վճարային հաշվեկշռի վերլուծական ներկայացումից պարզ երևում է, որ մեր տնտեսությունը շարունակում է կախվածության մեջ գտնվել արտաքին աշխարհից:

*ԼՂՀ վճարային հաշվեկշռների վերլուծական ներկայացումը
2014-2015թթ. հունվար-մարտին*

	2014թ. հունվար-մարտ	2015թ. հունվար-մարտ	Բացարձակ փոփոխությունը <i>/մլն դրամ/</i>
Ա.Ընթացիկ հաշիվ, առանց Ե խմբի	-9694.4	-10057.9	-363.5
Ապրանքներ, կրեդիտ	5011.8	4862.9	-148.9
Արտահանում f.o.b.	5011.8	4862.9	-148.9
Այլք	0.0	0.0	0.0
Ապրանքներ, դեբետ	-24073.7	-24466.2	-392.5
Ներմուծում f.o.b.	-24073.7	-24466.2	-392.5
Այլք	0.0	0.0	0.0
Հաշվեկշիռ ապրանքների գծով	-19061.9	-19603.3	-541.4
Ծառայություններ, կրեդիտ	911.7	754.5	-157.2
Տրանսպորտային	58.8	102.7	43.9
Այլք	852.9	651.8	-201.1
Ծառայություններ, դեբետ	-1920.8	-2204.1	-283.3
Տրանսպորտային	-964.9	-927.1	37.8
Այլք	-955.9	-1277.0	-321.1
Հաշվեկշիռ ծառայությունների գծով	-1009.1	-1449.6	-440.5
Հաշվեկշիռ ապրանքների և ծառայությունների գծով	-20071.0	-21052.9	-981.9
Եկամուտներ, կրեդիտ	67.5	233.0	165.5
Եկամուտներ, դեբետ	1610.0	1003.3	-606.7
Հաշվեկշիռ եկամուտների գծով	1677.5	1236.3	-441.2
Հաշվեկշիռ ապրանքների, ծառայությունների և եկամուտների գծով	-18393.5	-19816.6	-1423.1
Ընթացիկ տրանսֆերտներ, կրեդիտ	8728.9	9767.3	1038.4
Ընթացիկ տրանսֆերտներ, դեբետ	-29.8	-8.6	21.2

* Կապիտալի արտահոսքը վճարային հաշվեկշռում չի արտացոլված՝ այդ տվյալների հավաքագրման համակարգում մի շարք խնդիրների առկայության պատճառով

	2014թ. հունվար-մարտ	2015թ. հունվար-մարտ	Բացարձակ փոփոխությունը
Հաշվեկշիռ ընթացիկ տրանսֆերու- ների գծով	8699.1	9758.7	1059.6
Բ. Կապիտալի հաշիվ, առանց Ե խմբի	1735.4	749.4	-986.0
Կապիտալի հաշիվ, կրեդիտ	1735.4	749.4	-986.0
Կապիտալի հաշիվ, դեբետ	0.0	0.0	0.0
Ընդամենը Ա խումբ գումարած Բ	-7959.0	-9308.5	-1349.5
Գ. Ֆինանսական հաշիվ, առանց Ե խմբի	7156.5	7526.9	370.4
Ուղղակի ներդրումներ այլ երկրներ	0.0	0.0	0.0
Ուղղակի ներդրումներ այլ երկրներից	724.5	142.6	-581.9
Պորտֆելային ներդրումներից ակտիվներ	0.0	0.0	0.0
Արժեթղթերում մասնակցում	0.0	0.0	0.0
Պարտային արժեթուղթ	0.0	0.0	0.0
Պորտֆելային ներդրումներից պարտավորություններ	-1464.9	421.5	1886.4
Արժեթղթերում մասնակցում	0.0	0.0	0.0
Պարտային արժեթուղթ	-1464.9	421.5	1886.4
Ակտիվներ այլ ներդրումներից	-19727.1	-25561.6	-5834.5
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	-18466.0	-17733.6	732.4
Բանկեր	4253.8	-535.7	-4789.5
Այլ հատվածներ	-5514.9	-7292.3	-1777.4
Պարտավորություններ այլ ներդրումներից	27624.0	32524.4	4900.4
Դրամավարկային կարգավորման մարմիններ	0.0	0.0	0.0
Պետական կառավարման մարմիններ	13245.8	14260.9	1015.1
Բանկեր	-4768.0	-1004.7	3763.3
Այլ հատվածներ	19146.2	19268.2	122.0
Ընդամենը, խումբ Ա-ից Գ	-802.5	-1781.6	-979.1
Դ. Սխալներ և բացթողումներ մաքուր	802.5	1781.6	979.1
Ընդամենը, խումբ Ա-ից Դ (ընդհանուր հաշվեկշիռ)	0.0	0.0	0.0
Ե. Ֆինանսական հոդվածներ	0.0	0.0	0.0
Ռեզերվային ակտիվներ	0.0	0.0	0.0
Հիմնադրամի վարկի և Հիմնադրամից փոխառությունների օգտագործում	0.0	0.0	0.0
Բացառիկ ֆինանսավորում	0.0	0.0	0.0
Արտասահմանյան ռեզերվներ (իրավունքներ) հանդիսացող պարտավորություններ	0.0	0.0	0.0